



California's protection & advocacy system

Անցումային ծառայություններ աշակերտների համար

Օգոստոս 2015թ., Հրապ. #5567.10 - Armenian

Այս հրապարակումն այն մասին է, թե ինչպես են տարբեր մարմիններն օգնում հաշմանդամ պատանիներին, երբ նրանք մտնում են չափահաս կյանք: Այդ գործընթացը կոչվում է ԱՆՑՈՒՄ: Այդ մարմինները դպրոցական օկրուզներն են և Վերականգնողական դեպարտամենտը: Որոշ պատանիներ նաև տարածքային կենտրոնի նպաստառուներ են: Տարածքային կենտրոնները նույնպես պետք է օգնեն անցումային շրջանում:

Հոսով ենք՝ այս տեղեկատվությունը օգտակար է Ձեզ համար: Եթե ունեք հարցեր կամ լրացուցիչ օգնության կարիք, խնդրում ենք կապվել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության հետ (800) 776-5746 հեռախոսահամարով:

Բովանդակություն

Բաժին 1` Դպրոցական օկրուզներ	4
1. Անցման պլանավորումը պետք է սկսվի 16 տարեկանից:	4
2. Չնահատման տեղեկատվություն	6
3. Ի՞նչն է մտնում ձեր Անցումային պլանի մեջ:	7
4. Ի՞նչպես եք պատրաստվում ձեր IEP հանդիպմանը:.....	13
Բաժին 2` Վերականգնողական դեպարտամենտ (Department of Rehabilitation - DOR)	15
1. Անցումային պլանավորման մեջ կարող է ընդգրկված լինել DOR-ի ներկայացուցիչ	15
2. Ի՞նչն է մտնում ձեր Չբաղվածության անհատական պլանի մեջ (Individualized Plan for Employment - IPE):.....	16
3. Որո՞նք են այն ծրագրերը, որոնք կարող են առաջարկվել DOR-ի հետ համագործակցելու արդյունքում:	18
Բաժին 3` Տարածքային կենտրոններ	20
1. Տարածքային կենտրոնները նույնպես պետք է օգնեն իրենց նպաստառուներին անցումային շրջանում.....	20
2. Ի՞նչն է ներառվելու ձեր Անհատական ծրագրի պլանում (Individual Program Plan - IPP)	22
Բաժին 4` Այլ հարցեր.....	23
1. Ի՞նչ կպատահի, եթե ես պահանջեմ որևէ ծառայություն, իսկ Դպրոցական օկրուզը և DOR-ը երկուսն էլ ասեն, որ ծառայությունը պետք է տրամադրի մեկ այլ մարմին	23

2. Ի՞նչ կպատահի, եթե ես համաձայն չեմ դպրոցական օկրուզի կողմից ինձ տրամադրված Անցումային պլանի հետ	26
3. Ի՞նչ կպատահի, եթե դպրոցական օկրուզը չի տրամադրում իմ անցումային պլանում համաձայնեցված ծառայությունները	26
4. Ի՞նչ է պատահում, եթե DOR-ը մերժում է որևէ ծառայություն	27
5. Ի՞նչ կպատահի, եթե ես համաձայն չեմ ծառայության վերաբերյալ տարածքային կենտրոնի որոշման հետ	28
6. Ի՞նչ է Բաժին 4731-ով սահմանված բողոքը	29
7. Ի՞նչ է Նպաստառուների իրավունքների պաշտպանության գրասենյակը (Clients' Rights Advocacy - OCRA):	30
8. Օգտակար ռեսուրսներ	30

Բաժին 1՝ Դպրոցական օկրուզներ

1. Անցման պլանավորումը պետք է սկսվի 16 տարեկանից:

Դպրոցական օկրուզն անցման պլանավորումը պետք է սկսի ամենաուշը այն ժամանակ, երբ դուք 16 տարեկան եք:¹ Դուք նույնպես կարող եք դպրոցին խնդրել անցման պլանավորումն սկսել մինչև ձեր 16 տարեկան դառնալը: Ծանր հաշմանդամություն ունեցող աշակերտների համար լավ է վաղ սկսել: Աշակերտներն, ովքեր դպրոցից դուրս մնալու վտանգի տակ են, նույնպես պետք է վաղ սկսեն:

Դուք և ձեր Անհատական կրթական ծրագրի (Individualized Education Program - IEP) թիմը պետք է անցկացնեն հանդիպում՝ ձեր անցումային ծառայությունները պլանավորելու համար: Դուք կարող եք անել դա որպես ձեր կանոնավոր IEP հանդիպման մաս: Կամ կարող եք պլանավորել ձեր անցումային ծառայությունները IEP թիմի հետ՝ հատուկ հանդիպման ժամանակ: Առանձին հանդիպումը ձեզ ավելի շատ ժամանակ կտա՝ ձեր գաղափարների և ձեր ապագա անելիքների մասին խոսելու համար:

Որպես IEP գործընթացի մաս դուք և ձեր IEP թիմը գրավոր կկազմեք անցումային պլան: Այդ պլանը կարող է լինել ձեր IEP-ի մասը կամ առանձին փաստաթուղթ, որը կոչվում է Անհատական անցումային պլան (Individual Transition Plan, ITP):

Ի՞նչպես է կազմվում ձեր անցումային պլանը:

IEP-ում ամենակարևոր անձը ԴՌԲ էք: Երբ դուք հանդիպում եք IEP թիմի հետ ձեր անցումային պլանը քննարկելու համար, ձեզ

¹ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1414(d)(1)(A)(i)(VIII), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.320(b):

անհրաժեշտ է ասել նրանց, թե ինչ էք դուք ցանկանում անել և ինչ է ձեզ անհրաժեշտ: Սա կոչվում է ինքնապաշտպանություն: Կարևոր է, որ դուք հնարավորություն ունենաք արտահայտվելու ձեր նախընտրությունների մասին: Որոշ աշակերտներ օգտագործում են նկարներ: Այլոք օգտագործում են տեսանյութեր կամ տարբեր տիպի տեխնոլոգիաներ: Ձեզ անհրաժեշտ է հայտնել ձեր նախընտրությունների և ավագ դպրոցից հետո ձեր պլանների և ձեր ապագայի պլանների մասին՝ օգտագործելով հաղորդակցման այնպիսի ձև, որը բավարարում է ձեր կարիքները:

Երբեմն աշակերտները համոզված չեն՝ արդյոք նրանք բավարար չափով գիտեն ընտրություն կատարելու համար իրենց տարբերակների մասին: Դուք կարող եք օգնություն խնդրել՝ իմանալու ձեր տարբերակների մասին, որպեսզի կարողանաք սահմանել ձեր նպատակները: Դուք կարող եք դպրոցին խնդրել հրավիրել այլ անձանց, օր. ծնողներ, տարածքային կենտրոնի ծառայությունների համակարգող, Վերականգնողական դեպարտամենտին՝ լինելու ձեր IEP թիմի կազմում: Ոչ բոլոր մարմինները, որոնք հրավիրված են մասնակցելու, կարող են ընդգրկվել (օր. տարածքային կենտրոնի ծառայությունների համակարգող): Կարևոր է նշել, որ Աշխատուժի ինովացիայի և հնարավորությունների մասին օրենքը (Workforce Innovation and Opportunity Act, WIOA)² մեծացրել է Վերականգնողական դեպարտամենտի (Department of Rehabilitation - DOR) դերն անցումային գործընթացում, և այժմ DOR-ը պետք է մասնակցի IEP հանդիպմանը, եթե հրավիրված է:³

² Հանրային օրենքի 113-128 (ԱՄՆ օրենսգրքի հատված 29, բաժին 3101-ից սկսած)

³ ԱՄՆ օրենսգրքի հատված 29, բաժին 733(d)(4)

Որպես անհատական անցումային պլանավորման գործընթացի մաս օրենքը⁴ պահանջում է, որ ձեր IEP-ն ներառի համապատասխան գնահատումներ, ավագ դպրոցն ավարտելուց հետո ձեր անցումային նպատակները կամ անցումային նպատակները միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, տարեկան նպատակները, ձեր կրթական ծրագիրը և անցումային ծառայությունները, որոնք կօգնեն ձեզ հասնելու ձեր նպատակներին:

2. **Գնահատման տեղեկատվություն**

Անցման պլանավորումն ակսվում է անցման գնահատմամբ: Անցման գնահատումը ներառում է տեղեկատվություն, որը դուք և ձեր ընտանիքը տրամադրում եք ձեր հետաքրքրությունների, հմտությունների և ցանկացած այն խնդիրների վերաբերյալ, որոնց հնարավոր է բախվել: Այն ներառում է նաև ինքնուրույն կենսակերպի հմտությունների գնահատումը և չափահաս կյանքին անցնելու ձեր պատրաստակամությունը: Այս գնահատման շրջանակում կարող է հարցազրույցի ընթացքում լինել զրույց որևէ մեկի հետ՝ ավագ դպրոցն ավարտելուց հետո ձեր պլանների մասին: Որոշ աշակերտների անհրաժեշտ է ներկայացնել այս տեղեկատվությունը հաղորդակցման այլ ձևերի օգտագործմամբ, օր. նկարների, տեսանյութերի և/կամ օժանդակ տեխնոլոգիաների միջոցով:

Դուք կարող եք կազմել ձեր հետաքրքրությունների և ձեր հմտությունների առցանց հարցում: Երբ դուք մասնակցում եք ձեր անցումային կարիքների գնահատմանը, դուք սկսում եք իմանալ ավելին ձեր և աշխատանքի կամ քուլեջի տարբերակների մասին: Մասնագիտական հետաքրքրությունների հարցումներն օգնում են սահմանել ապագայի ձեր հույսերն ու երազանքները: Նրանք

⁴ Դաշնային կանոնադրի հատված 34, բաժին 300.43 (a), ԱՄՆ օրենսդրի հատված 20, բաժին 1401(34)

կենտրոնանում են ձեր հետաքրքրությունների և ձեր առանձնահատուկ տաղանդների վրա: Նրանք նաև բացահայտում են այն խնդիրները, որոնց կարող եք բախվել չափահաս կյանքին անցնելու համար նախապատրաստվելիս: Երբ թվարկում եք ձեր աշխատանքային նպատակները, դուք պետք է հայտնեք թիմին ձեր կրթական և վերապատրաստման նպատակների մասին: Շատ աշխատանքների համար պահանջվում է կրթություն և վերապատրաստում դպրոցն ավարտելուց հետո: Երբեմն դուք կարող եք ավարտել վերապատրաստումը աշխատանքի ընթացքում: Որոշ աշխատանքների համար պահանջվում է "սերտիֆիկացիա"՝ փաստաթուղթ, որը գործատուին հայտնում է, որ դուք ունեք ձեր ցանկացած աշխատանքը կատարելու հմտություններ: Որոշ աշխատանքների համար պահանջվում է բակալավրի կամ ավելի բարձր աստիճան: Գնահատման ողջ տեղեկատվությունը պետք է պահվի Անցկացման ամփոփագիր (Summary of Performance - SOP)/Անցման պորտֆոլիո փաստաթղթերում:

Գնահատումը ձեր թիմին հայտնում է ավագ դպրոցից հետո ձեր նպատակների մասին: IEP-ի մնացած մասը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչ կարող են անել դպրոցները՝ օգնելու ձեզ հասնել ձեր նպատակներին, որոնք չեն վերաբերում ավագ դպրոցից հետո եկող կյանքին:

3. Ի՞նչն է մտնում ձեր Անցումային պլանի մեջ:

Ձեր անցումային պլանը կունենա երկու մաս.

- Առաջին մասն այն մասին է, թե ինչ եք դուք ցանկանում անել, երբ դառնաք չափահաս: Դրանք ձեր ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ:⁵ Դուք

⁵ Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.320(b)(1):

և ձեր IEP թիմը պետք է վերանայեք ձեր նապատակներն ամեն տարի:⁶

- Երկրորդ մասն այն մասին է, թե ինչ եք դուք ցանկանում անել ձեր ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ հասնելու համար: Դրանք կոչվում են «ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»: Ձեր անցումային պլանը պետք է պարունակի գործողությունների համակարգված ծրագիր, որոնք կօգնեն ձեզ հասնել ձեր ապագա նպատակներին:⁷

Մաս առաջին՝ Նպատակներ

Ձեր անցումային պլանը պետք է ունենա ապագայի երկարաժամկետ ՆՊԱՏԱԿՆԵՐ, նպատակներ, որոնց դուք կհասնեք ավագ դպրոցն ավարտելուց հետո (դրանք նաև կոչվում են միջնակարգ կրթությանը հաջորդող նպատակներ): Ապագայի ձեր երկարաժամկետ նպատակները այնպիսի բաներ են, ինչպիսիք են օրինակ՝ ցանկանում եք գնալ քոլեջ, թե ոչ, ինչ տիպի քոլեջ եք ուզում գնալ և/կամ ինչ մասնագիտական (աշխատանքային) ծրագրի եք ուզում մասնակցել և ինչ տիպի աշխատանք եք պլանավորում կատարել:

Նշվող նպատակները ներառում են. աշխատանքի ընդունման նպատակներ, կրթական և վերապատրաստման նպատակներ և եթե IEP թիմը համաձայն է, ձեր ինքնուրույն կյանքի նպատակները:

Միջնակարգ կրթությանը հաջորդող նպատակների օրինակներ են.

Աշխատանք. Ավագ դպրոցից հետո ես ցանկանում եմ ունենալ փոքր երեխաներին դասավանդելու աշխատանք:

⁶ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1414(d)(1)(A)(i)(VIII), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.320(b):

⁷ Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.320(b)(2)

Էջ 9` 31-ից

Կրթություն/Վերապատրաստում. Ավագ դպրոցից հետո ես կընդունվեմ իմ համայնքային քոլեջը և ձեռք կբերեմ վաղ մանկական տարիքի երեխաների հետ աշխատելու սերտիֆիկացիա:

Ինքնուրույն կյանք. Ավագ դպրոցից հետո ես կապրեմ իմ սեփական միջոցներով:

Դուք պետք է ունենաք նաև կարճաժամկետ (տարեկան) նպատակներ: Դրանք այն բաներն, որոնք դուք կարող եք իրականացնել մեկ տարում կամ ավելի կարճ ժամկետում: Դրանք այնպիսի բաներ են, որոնք կօգնեն ձեզ հասնելու ապագայի ձեր երկարաժամկետ նպատակներին:

Տարեկան նպատակների օրինակներ.

Ես կլրացնեմ աշխատանքի ընդունման առցանց դիմում:

Ես կկազմեմ աշխատանքի ընդունման դիմումի ձև:

Ես կկազմեմ ինքնակենսագրություն (ռեզյումե):

Ես կլրացնեմ քոլեջ ընդունվելու դիմում:

Ես առցանց կդիմեմ ֆինանսական օգնություն ստանալու համար:

Ես կգրեմ հիմնավորում որպես նախադպրոցական հաստատության մանկավարժ աշխատելու իմ մասնագիտական ընտրության մասին:

Ես կկազմեմ բյուջե:

Ձեր բոլոր նպատակները պետք է հիմնված լինեն ձեր սեփական կարիքների վրա: Ձեր նպատակները պետք է լինեն այնպիսին, որոնք հնարավոր լինի չափել: Ձեր նպատակները պետք է հիմնված լինեն գնահատումների վրա: Այդ գնահատումները պետք է օգնեն ձեզ ձևակերպել այն, թե ինչով եք ցանկանում զբաղվել, ինչում եք դուք լավ, ինչ աշխատանք դուք կցանկանայիք կատարել:

Մաս երկրորդ՝ Գործողություններ

Ձեր անցումային պլանը պետք է ունենա ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համակարգված ծրագիր, որը կօգնի ձեզ հասնել ավագ դպրոցն ավարտելուց հետո ձեր կյանքի նապատակին: Ձեր գործողությունները պետք է կենտրոնանան ձեր կրթական և ինքնուրույն կյանքի հմտությունների զարգացման վրա, որպեսզի դուք կարողանաք սահուն կերպով անցնել ավագ դպրոցից քոլեջ, ընդունվել մասնագիտական վերապատրաստման ծրագրում, աշխատանքի կամ զբաղվել ավագ դպրոցին հաջորդող այլ գործունեությամբ: Ձեր գործողությունները պետք է ներառեն նաև ֆունկցիոնալ մասնագիտական գնահատում:⁸

Ձեր գործողությունների համակարգված ծրագիրը կարող է ներառել.

Ուսուցողական ծառայություններ.

Ուսուցողական ծառայությունը դաս է, որն օգնում է ձեզ ձեռք բերել ձեր երկարաժամկետ նապատակներին հասնելու համար ձեզ անհրաժեշտ հմտությունները: Օրինակ՝ եթե դուք ցանկանում եք աշխատել համակարգիչների հետ, ձեր ուսուցողական ծառայությունը կլինի դաս համակարգիչների մասին: Կամ եթե դուք ցանկանում եք լինել խոհարար, ձեր ուսուցողական ծառայությունը կներառի հանձնարարություններ, որոնք կօգնեն ձեզ սովորել բաղադրատոմսեր կարդալ: ⁹

Համայնքային շփումներ

⁸ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a):

⁹ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(i)

Համայնքային շփումները կարող են օգնել ձեզ մասնակից լինել ձեր համայնքի կյանքին: Համայնքային շփման օրինակ է, երբ ձեզ օգնում են հանդիպել ձեր համայնքի մարդկանց, ովքեր կաջակցեն ձեզ ձեր նպատակներին հասնելու և ինքնուրույն կյանք վարելու հարցերում:¹⁰

Չբաղվածության հետ կապված նպատակներ

Չբաղվածության հետ կապված նպատակները կարող են օգնել տեղեկացնել ձեզ, թե ինչ աշխատատեղեր կարող են առաջարկվել ձեր տարածքում: Չբաղվածության հետ կապված նպատակները կարող են նաև տեղեկացնել ձեզ այն մասին, թե ինչ պետք է դուք անեք ավագ դպրոցից հետո վերապատրաստման դասընթացներին, քոլեջին կամ աջակցված աշխատանքի ընդունվելուն համապատասխանելու և նախապատրաստվելու համար:¹¹

Հարակից ծառայություններ

Հարակից ծառայությունները այն ծառայություններն են, որոնք տարբեր են ուսուցողական ծառայություններից և օգնում են ձեզ հասնել ձեր կրթական նպատակներին: Հարակից ծառայությունների օրինակներ են.

- Խոսքային խնդիրների թերապիան,
- Մասնագիտական հիվանդությունների բուժումը,
- Կարիերայի կողմնորոշման խորհրդատվությունը,

¹⁰ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(iii):

¹¹ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(iv):

- Ճանապարհափոխադրում մասնագիտական վերապատրաստման դասընթացներին կամ դեպի ինքնուրույն կյանքի կենտրոններ,
- Խորհրդատվական ծառայություններ, որոնք օգնում են ձեզ ձեռք բերել քոլեջ կամ աշխատանքի ընդունվելու հետ կապված արագ ընկալելու հմտություններ, և
- Հասարակական աշխատանքի ծառայություններ, որոնք օգնում են ձեզ կապվել այն մարմինների հետ, որոնք կարող են օգնել ձեզ հասնել ձեր երկարաժամկետ նպատակներին:¹²

Ինքնուրույն կյանք վարելու հմտություններ

Ինքնուրույն կյանք վարելու հմտությունները կարող են օգնել ձեզ, եթե դուք ունեք այնպիսի գործեր կատարելու պրակտիկայի կարիք, ինչպիսիք են ճաշերի պատրաստումը, գնումներ կատարելը, բյուջե կազմելը, տան պահպանման աշխատանքները, հաշիվների վճարումը, հարդարվելը կամ հասարակական տրանսպորտով երթևեկելը:¹³

Ֆունկցիոնալ գնահատում

Եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն ձեր զբաղվածության նպատակը սահմանելու հարցում, ֆունկցիոնալ գնահատումը կարող է ուղղորդել ձեզ: Այս գնահատումը գնահատում է ձեզ այնպիսի իրավիճակում, որը նման է ձեզ հետաքրքրող աշխատանքի տեսակին և ձեզ տալիս է

¹² ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(ii):

¹³ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(v):

գործնական տեղեկատվություն ձեր ուժեղ կողմերի և հմտությունների մասին:¹⁴

4. Ի՞նչպես եք պատրաստվում ձեր IEP հանդիպմանը:

Ե՛վ աշակերտները, և՛ ծնողները IEP թիմի բաղկացուցիչ մասերն են: Ստորև ներկայացված են անցումային պլանավորման գործընթացին նպաստելու մի քանի ճանապարհներ.

a. Կազմել ցուցակ և/կամ օրակարգ

Կատարե՛ք ձեր ուսումնասիրությունը և եղե՛ք պատրաստված նախքան IEP հանդիպմանը գնալը: Ձեր IEP հանդիպումից առաջ ձեզ համար կարող է օգտակար լինել ձեր ուժեղ կողմերի, կարիքների, երազանքների, վախերի և ապագայի համար ձեր ցանկությունների ցուցակի կազմումը: Դա կարող է օգնել ձեզ՝ պատրաստվելու ձեր IEP հանդիպման ընթացքում ձեզ համար ցանկալի թեմաների քննարկմանը:

Դուք կարող եք IEP հանդիպման համար կազմել նաև օրակարգ և ներառել անցման վերաբերյալ ձեր ունեցած հարցերը, որպեսզի դրանք հնարավոր լինի քննարկել (հնարավորության դեպքում ձեր գործը վարողի/ուսուցչի և IEP թիմի այլ անդամների հետ քննարկեք այս հարցերը մինչև պաշտոնական IEP հանդիպումը): Հաճախ ձեր հարցերի պատասխանները տրվում են հեշտությամբ և օգնում են ունենալ արդյունավետ հանդիպում: Դուք պետք է ի վիճակի լինեք ամբողջությամբ հասկանալ և մասնակցել IEP հանդիպմանը:¹⁵ Ձեզ թույլ է տրվում տալ հարցեր և ձեզ հետ բերել որևէ ընկերոջ կամ

¹⁴ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(34)(c), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.43(a)(2)(v):

¹⁵ Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.321(b)(1):

աջակցող անձի: Եթե դուք չեք գալիս IEP հանդիպմանը, դպրոցական օկրուզը պետք է ձեռնարկի այլ քայլեր՝ համոզվելու, որ ձեր նախընտրություններն ու հետաքրքրությունները հաշվի են առնվել:¹⁶

b. Մասնակցել IEP-ի մշակմանը

Ինչպես քննարկվեց վերևում, գնահատումները կարող են օգտակար լինել IEP-ի մշակման համար տեղեկատվություն հավաքելու գործում: Գնահատումներն անցկացնելու համար ձեր ծնողը/խնամակալը (կամ դուք, եթե ձեր տարիքը 18 տարեկանից բարձր է) պետք է համաձայնի այս գնահատումների անցկացմանը՝ ստորագրելով ձևաթուղթ: Այս ձևաթղթում թվարկված են գնահատման գործիքներից մի քանիսը, որոնք կօգտագործվեն՝ հավաքելու գնահատման տեղեկատվությունը, որը կօգտագործվի հետևյալ անցումային ոլորտներում IEP-ի մշակման համար.

կրթություն/վերապատրաստում, զբաղվածություն և ինքնուրույն ապրելակերպ: Դուք և ձեր ընտանիքը պետք է տաք հարցեր գնահատման այս գործիքների վերաբերյալ:

Օգտակար կլինի նաև պահանջել՝ մշակել Անձին ուղղված/Անձից բխող պլաններ, որոնք կօգնեն որոշել միջնակարգ կրթությանը հաջորդող նպատակները, տարեկան IEP նպատակները, անցումային ծառայությունները և գործողությունները: Անձին ուղղված պլանավորում նշանակում է, որ ձեր անցումային պլանի մշակումը կենտրոնացած կլինի այն հարցի վրա, թե ինչն է, որով դուք կցանկանայիք զբաղվել ավագ դպրոցն ավարտելուց հետո: Ձեր ապագա նպատակների իրականացմանն օժանդակող համաձայնեցված ծառայություններն ու աջակցությունները պետք է գրվեն ձեր IEP-ում:

¹⁶ Դաշնային կանոնադրքի հատված 34, բաժին 300.321(b)(2):

Բաժին 2՝ Վերականգնողական դեպարտամենտ (Department of Rehabilitation - DOR)

1. Անցումային պլանավորման մեջ կարող է ընդգրկված լինել DOR-ի ներկայացուցիչ

Դուք կարող եք պահանջել, որ դպրոցական օկրուզը IEP հանդիպմանը հրավիրի DOR-ի ներկայացուցիչ: Դուք պետք է պահանջեք դա գրավոր, և ձեր պահանջը պետք է ներառի ձեր համաձայնությունը և ձեր ծնողի համաձայնությունը:¹⁷

Կարևոր է ձեր անցումային հանդիպմանն ունենալ DOR-ի ներկայացուցիչ, քանի որ DOR-ը կարող է տրամադրել անցումային ծառայություններ՝ օգնելով ձեզ հասնել ձեր աշխատանքային նպատակին:¹⁸ Հրավիրված լինելու դեպքում DOR-ից պահանջվում է ներկայանալ IEP հանդիպմանը:

DOR-ը պատասխանատու է՝ որոշելու, արդյոք դուք կարող եք ստանալ իրենց կողմից տրամադրված անցումային ծառայությունները: Համապատասխանելու համար DOR-ը պետք է որոշի, որ (1) ձեր ֆիզիկական կամ մտավոր խնդիրները զգալիորեն խոչընդոտում են ձեր աշխատանքի ընդունվելուն, (2) աշխատանքի ընդունվելու արդյունքի առումով ձեզ համար օգտակար կլինեն իրենց աշխատունակության վերականգնման ծառայությունները և (3) դուք պահանջում եք աշխատունակության վերականգնման ծառայություններ աշխատանքի ընդունվելուն պատրաստվելու, աշխատատեղ ստանալու կամ այն վերականգնելու համար:¹⁹

¹⁷ Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.321(b)(3):

¹⁸ Կալիֆորնիայի կանոնագիրք, հատված 9, բաժիններ 7028.6 և 7149(r):

¹⁹ Կալիֆորնիայի կանոնագիրք, հատված 9, բաժին 7062

Եթե DOR-ը չի կարողանում ներկայանալ ձեր անցումային հանդիպմանը, դուք այնուամենայնիվ իրավունք ունեք դիմել DOR-ի ծառայությունների համար՝ որոշելու, արդյոք դուք կհամապատասխանեք:

DOR-ի համապատասխանության մասին մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/540101.pdf>

Եթե DOR-ը գտնում է, որ դուք համապատասխանում եք իրենց ծառայություններին, DOR-ը պետք է ձեր անցման պլանավորման ընթացքում հնարավորինս շուտ, սակայն ամենաուշը մինչև ձեր դպրոցն ավարտելը, մշակի ձեր Չբաղվածության անհատական պլանը (Individualized Plan for Employment - IPE) և պետք է հաշվի առնի ձեր IEP-ը և ձեր կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակների և ձեր IEP-ում սահմանված ծառայությունների հետ աշխատի համակարգված կերպով:²⁰

2. Ի՞նչն է մտնում ձեր Չբաղվածության անհատական պլանի մեջ (Individualized Plan for Employment - IPE):

Ձեր Չբաղվածության անհատական պլանը կունենա երկու մաս.

- Մաս առաջին՝ Ձեր ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ սահմանում,
- Մաս երկրորդ՝ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ սահմանում և թվարկում, որոնք DOR-ը պետք է տրամադրի՝ օգնելու ձեզ հասնել ձեր մասնագիտական նպատակներին:²¹

²⁰ Կալիֆորնիայի կանոնագիրք, հատված 9, բաժին 7131.2(a), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 361.22(a)(2):

²¹ Կալիֆորնիայի կանոնագիրք, հատված 9, բաժին 7131(a)(1) և (2):

Մաս առաջին՝ Սահմանել Ձեր մասնագիտական նպատակը

Ձեր մասնագիտական նպատակը ձեր աշխատանքային նպատակն է: Մասնագիտական նպատակի օրինակ կարող է լինել. "աշակերտը կընդունվի աշխատանքի որպես օգնական":

Մաս երկրորդ՝ Թվարկել անաշխատունակության վերականգնման ծառայությունները, որոնք կօգնեն ձեզ հասնել ձեր մասնագիտական նպատակին

Առաջին մասում, ձեր մասնագիտական նպատակը սահմանելուց հետո, ձեր Չբաղվածության անհատական պլանի երկրորդ մասը պետք է թվարկի այն ծառայությունները, որոնք կօգնեն ձեզ հասնել այդ նպատակին:

Օրինակ, եթե ձեր մասնագիտական նպատակն է դառնալ օգնական, ծառայությունների ցանկը կարող է լինել հետևյալը. օգնականի դպրոցի կրթաթոշակի ֆինանսավորում, սերտիֆիկացիա, գրքեր և գրեական պիտույքներ և ճանապարհափոխադրումը դեպի դպրոց և հետ:

Կարևոր է համոզվել, որ ձեր IPE-ում սահմանված լինեն ձեզ անհրաժեշտ բոլոր ծառայությունները՝ ձեր զբաղվածության հետ կապված նպատակին համապատասխանելու համար: IPE-ն ունենալուց հետո DOR-ը պատասխանատու է IPE-ում համաձայնեցված անցումային ծառայությունների տրամադրման և դրանց դիմաց վճարման համար այն ժամանակահատվածում, որի ընթացքում անհատը մասնակցում է VR ծրագրին:²²

²² DOR-ի 2012թ. նահանգային ծրագիր, Հավելված 4.8(b)(2) ("DOR State Plan"), Էջ 3 (կարելի է գտնել <http://www.rehab.cahwnet.gov/Public/DOR-State-Plan.html> կայքէջում), Կալիֆոռնիայի կանոնագիրք, հատված 9, 7028.6,7131.2 և 7149:

3. Որո՞նք են այն ծրագրերը, որոնք կարող են առաջարկվել DOR-ի հետ համագործակցելու արդյունքում:

Անցումային գործընկերության ծրագիրը (Transition Partnership Program - TPP) ավագ դպրոցի հաշմանդամ աշակերտներին կապում է Կալիֆորնիայի Վերականգնողական դեպարտամենտի (California Department of Rehabilitation - DOR) հետ և աջակցում է նրանց աշխատել իրենց անցումային շրջանում: TPP-ն օգնում է աշակերտներին հաղթահարել աշխատանքի ընդունվելու հետ կապված խոչընդոտները: Աջակցությունը կարող է ներառել ուղղակիորեն աշխատատեղի փնտրությունը, մասնագիտական վերապատրաստման դասընթաց կամ միջնակարգ կրթությանը հաջորդող կրթություն: TPP-ն հասանելի չէ բոլոր շրջաններում, կապվե՞ք անմիջապես ձեր շրջանի վարչության հետ՝ պարզելու, արդյոք այնտեղ կա TPP: Նաև՝ աշակերտներից չի պահանջվում մասնակցել TPP ծրագրին DOR-ի ծառայություններից օգտվելու համար:

College 2 Career (C2C) ծրագրերը Կալիֆորնիայի համայնքային քոլեջների միության նախագահի գրասենյակի (California Community Colleges' Chancellor's Office) հետ համատեղ կազմում են Վերականգնողական դեպարտամենտի (Department of Rehabilitation - DOR) մասը և նպատակ ունեն մշակել մասնագիտական վերապատրաստման պիլոտային դասընթացներ մտավոր հետամնացությամբ անհատների (intellectual disabilities - ID) համար: Աշակերտները կստանան ցուցումներ և աջակցություն՝ իրենց ընտրած մասնագիտական բնագավառում մրցակցային ներառական աշխատատեղ ապահովելու նպատակով: C2C ծրագրերը չեն առաջարկվում համայնքային քոլեջների բոլոր շրջաններում: Դուք կարող եք կապվել ձեր շրջանի համայնքային քոլեջների հետ՝ պարզելու, արդյոք նրանք ունեն այս ծրագիրը:

Workability Programs (Պիտանիության ծրագրեր) -տրամադրում են աշխատանքի ընդունվելու հետ կապված ծառայություններ կրթական միջավայրում: Կան Պիտանիության ծրագրերի չորս տարբեր տեսակներ.

- Workability I ծրագիրը ավագ դպրոցի աշակերտների համար ապահովում է մասնագիտական վերապատրաստում և ծառայություններ,
- Workability II ծրագիրը Մեծահասակների կրթության և մասնագիտական վերապատրաստման տարածքային ծրագրերում (Adult Education and Regional Occupational Programs) ընդգրկված աշակերտների համար ապահովում է ուղղակի մասնագիտական վերապատրաստում,
- Workability III ծրագիրը համայնքային քոլեջների ուսանողներին տրամադրում է մասնագիտական զարգացման ծառայություններ, օրինակ՝ որակավորման բարձրացման և քոլեջում հաջողության հասնելու դասեր՝ երկամյա սերտիֆիկացիոն ծրագիրն ավարտելու, կրթական աստիճան ստանալու կամ փոխադրման որևէ ծրագիր ավարտելու համար, և
- Workability IV ծրագիրը պետական համալսարանների ուսանողների համար ապահովում է մասնագիտական զարգացման ծառայություններ, ինչպիսիք են կարիերայի հարցերով խորհրդատվությունը և դասընթացները՝ կրթության և աշխատանքային փորձի միջև բացը լրացնելու համար:

Այս ծրագրերը չեն առաջարկվում բոլոր շրջաններում: Կախված ձեզ հետաքրքրող Workability ծրագրի տեսակից՝ դուք պետք է կապվեք ձեր շրջանի դպրոցական օկրուգի, համայնքային քոլեջի կամ պետական համալսարանի հետ՝ պարզելու, արդյոք նրանք ունեն այս ծրագրերից որևէ մեկը:

Եթե դուք համաձայն չեք Workability ծրագրի հետ կամ ունեք հարցեր ծրագրի մասին, մանրամասն տեղեկությունների համար զանգահարե՛ք Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությանը:

Անցումային ծառայություններ աշխատանքի ընդունվելուց առաջ (Pre-Employment Transition Services - PETS)

DOR-ից պահանջվում է տրամադրել հետևյալ 5 ծառայություններն այն հաշմանդամ աշակերտներին (16-ից 21 տարեկան), ովքեր համապատասխանում են կամ հավանականորեն համապատասխանում են VR ծառայություններից օգտվելու համար. (1) աշխատատեղի փնտրտուքի խորհրդատվություն, (2) աշխատանքի վրա հիմնված գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություններ, (3) խորհրդատվություն միջնակարգ կրթությանը հաջորդող կրթական հնարավորությունների մասին, (4) աշխատատեղին պատրաստ լինելու վերապատրաստում և (5) ցուցումներ ինքնապաշտպանության համար²³:

Բաժին 3՝ Տարածքային կենտրոններ

1. Տարածքային կենտրոնները նույնպես պետք է օգնեն իրենց նպաստառուներին անցումային շրջանում

Որոշ պատանիներ տարածքային կենտրոնի նպաստառուներ են, և տարածքային կենտրոնը պետք է օգնի նրանց իրենց անցումային շրջանում:

Տարածքային կենտրոնը կարող է տրամադրել ինքնուրույն ապրելակերպի և մասնագիտական զարգացման հետևյալ ծառայությունները.

- մրցունակ զբաղվածություն,
- նախապատրաստում աշխատանքի ընդունվելուն,
- ինքնազբաղվածություն,
- աջակցված զբաղվածություն,
- մեծահասակների զարգացման կենտրոններ կամ ցերեկային ծրագրեր,
- աջակցություն առօրյա կյանքում և

²³ ԱՄՆ օրենսգրքի հատված 29, բաժին 733(b)

- վարքի կառավարման ծրագիր:²⁴

Եթե այս ծրագրերը չեն բավարարում ձեր կարիքները, տարածքային կենտրոնը կարող է մշակել ձեր կարիքները բավարարող համապատասխան ծրագիր:²⁵

Այդուհանդերձ, տարածքային կենտրոնը չի տրամադրում վերը թվարկված ծառայություններից որոշները 18-ից 22 տարեկան այն աշակերտներին, ովքեր համապատասխան են հատուկ կրթություն ստանալու համար և ավագ դպրոցից չեն ստացել ավարտական դիպլոմ կամ վկայական:²⁶ Սակայն օրենքով նախատեսվում են բացառություններ:²⁷

Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս "*Չհատուկ կրթություն 18-22 տարեկան նպաստառուների տրամադրվող մեծահասակների ծառայությունների փոխարեն*" (*Special Education Instead of Adult Services for Consumers Between the Ages of 18-22*) վերնագրով տեղեկատվական թերթիկն առցանց, հետևյալ կայքէջում՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/F05001.pdf>

²⁴ *Տե՛ս հիմնականում* Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4512(b)-ը:

²⁵ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4512(b):

²⁶ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4648.55:

²⁷ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4648.55(d):

2. Ի՞նչն է ներառվելու ձեր Անհատական ծրագրի պլանում (Individual Program Plan - IPP)

Եթե դուք տարածքային կենտրոնի նպաստառու եք, պետք է ունենաք Անհատական ծրագրի պլան (Individual Program Plan - IPP)՝ փաստաթուղթ, որն ասում է, թե որ ծառայություններն ու աջակցություններն են ձեզ անհրաժեշտ և նախընտրելի ձեզ համար: Կարևոր է, որ տարածքային կենտրոնը մշակի այնպիսի IPP, որը բավարարի ձեր կարիքները և արտացոլի ձեր ընտրություններն ու նախընտրությունները: Ձեր IPP հանդիպումը կսահմանի ձեր IPP-ում ընդգրկվող ինքնուրույն ապրելակերպի և մասնագիտական զարգացման ծառայությունները:

IPP հանդիպումը պետք է կենտրոնանա ձեզ վրա: Դա կոչվում է "անձին ուղղված" պլանավորում: Երբ պլանավորումն ուղղված է ձեզ, ձեր IPP-ն պետք է աշխատի այն ապագայի ուղղությամբ, որը դուք ցանկանում եք ձեզ համար:²⁸

Տարածքային կենտրոնի ծառայությունների վերաբերյալ մասնրամասն տեղեկությունների համար տե՛ս այն հրապարակումը, որի վերնագիրն է *Լանթերմանի օրենքով սահմանված իրավունքներ (Rights Under the Lanterman Act)*. *Տարածքային կենտրոնի ծառայություններ զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց համար (Regional Center Services for People with Developmental Disabilities)*, որը կարելի է գտնել առցանց

<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsRULAEnglish.htm>

կայքէջում

²⁸ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4646(a):

Բաժին 4՝ Այլ հարցեր

1. Ի՞նչ կպատահի, եթե ես պահանջեմ որևէ ծառայություն, իսկ Դպրոցական օկրուզը և DOR-ը երկուսն էլ ասեն, որ ծառայությունը պետք է տրամադրի մեկ այլ մարմին

Ծառայության մատակարարը կախված է ծառայության նպատակից: Եթե ծառայությունը *կրթական* նպատակի համար է, *դպրոցական օկրուզը* պետք է գրանցի այն IEP-ում և ֆինանսավորի ծառայությունը: Եթե ծառայությունը *մասնագիտական* նպատակով է, *DOR-ը* պետք է գրանցի այն IEP-ում և ֆինանսավորի ծառայությունը: Այս կարգը սահմանված է Կալիֆորնիայի Կրթության դեպարտամենտի և Կալիֆորնիայի Վերականգնողական դեպարտամենտի միջև կնքված *Միջգերատեսչական համաձայնագրում (Interagency Agreement)*:

Միջգերատեսչական համաձայնագիրը ներկայացնում է հետևյալ օրինակը.

Եթե որևէ աշակերտ ունի օրթոպեդիկ և վերականգնողական տեխնոլոգիական սարքի կարիք, որը կօգնի նրան դպրոցում, դպրոցական օկրուզը պետք է այդ սարքը ներառի աշակերտի IEP-ում և տրամադրի այն:

Եթե աշակերտն ունի օրթոպեդիկ և վերականգնողական տեխնոլոգիական սարքի կարիք, որը կօգնի նրան իրականացնելու իր աշխատանքային նպատակը, քանի որ նա մտնում է աշխատանքային աշխարհ, DOR-ը պետք է այդ սարքը ներառի աշակերտի IEP-ում և տրամադրի այն:

Դպրոցական օկրուզը ձեր կրթական ծառայությունների մատուցման առաջնային պատասխանատուն է այնքան ժամանակ, քանի դեռ դուք

չեք ավարտել կամ դուրս չեք եկել ավագ դպրոցից:²⁹ Դպրոցական օկրուզը պետք է վստահ լինի, որ յուրաքանչյուր հաշմանդամ աշակերտ ստանում է համապատասխան անվճար պետական կրթություն՝ իր IEP-ին համաձայն:³⁰ Օրենքով IEP թիմը պետք է ձեռք համար նախատեսի անցումային ծառայություններ՝ սկսած ամենաուշը 16 տարեկանից: Այդ ծառայությունները պետք է տրամադրվեն այն ժամանակ, քանի դեռ դուք 22 տարեկանում չեք ավարտել կամ դուրս չեք եկել ավագ դպրոցից:³¹

Այնուամենայնիվ, այլ մարմինները, ինչպիսին DOR-ն է, պետք է պատասխանատու լինեն հաշմանդամ աշակերտներին տրամադրվող համապատասխան անվճար պետական կրթության տրամադրման և դրա որոշ կամ բոլոր ծախսերի վճարման համար:³²

Միջգերատեսչական համաձայնագրի նպատակն է՝ ապահովել, որ ծառայությունների, որոնք համարվում են նաև հատուկ կրթական ծառայություններ, տրամադրման համար պատասխանատու բոլոր պետական մարմինները կատարեն իրենց պարտավորությունները:³³

²⁹ Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.102, Կալիֆորնիայի Կրթության մասին օրենքի բաժիններ 56026(c)(4) և 56026.1:

³⁰ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1401(9), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.17:

³¹ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1414(d)(1)(A)(i)(VIII); Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժին 300.320(b), Կալիֆորնիայի Կրթության մասին օրենքի բաժին 56026(c)(4):

³² ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1412(a)(12), Դաշնային կանոնագրքի հատված 34, բաժիններ 300.324(b) և (c):

³³ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1412(a)(12)(B)(i):

Եթե որևէ մարմին, ինչպիսին DOR-ն է, չի կատարում իր պարտավորությունը, անհրաժեշտ ծառայությունները պետք է տրամադրի դպրոցը, որը սակայն իրավունք ունի պահանջել փոխհատուցում պետական մարմնից:³⁴

DOR-ը պետք է վճարի ձեր IPE-ում նշված անցումային ծառայությունների համար այնքան ժամանակ, որքան դուք մասնակցում եք DOR ծրագրում:³⁵ Ընդհանուր առմամբ, DOR-ը այն մարմինն է, որը պատասխանատու է աշխատունակության վերականգնման ծառայությունները հաշմանդամ անձանց տրամադրելու համար, ովքեր ունեն այդ ծառայությունների կարիքը՝ աշխատանքի ընդունմանը պատրաստվելու, աշխատատեղ ապահովելու, այն պահպանելու կամ վերականգնելու համար:³⁶ Աշխատունակության վերականգնման ծառայությունները կարող են ներառել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են աջակցություն աշխատատեղ ապահովելու հարցում աջակցված աշխատանքի ընդունման միջոցով, անցում միջնակարգ կրթությանը հաջորդող կրթությանը և օգնություն/աջակցություն այդ հարցում կամ լրացուցիչ դասընթացներ, որոնք անհրաժեշտ են աշխատանքային նպատակին հասնելու համար:

Որպես եզրափակում, եթե ծառայությունը նշված է IEP-ում կամ IPE-ում, փաստաթղթում նշված պատասխանատու մարմինը պետք է վճարի ծառայությունների համար: Այնուամենայնիվ, եթե ծառայությունները սահմանվել են որպես կարիք, դպրոցական օկրուգը կարող է ֆինանսավորել ծառայությունները և պահանջել

³⁴ ԱՄՆ օրենսգրքի հատված 20, բաժին 1412(a)(12)(B)(ii):

³⁵ Կալիֆորնիայի կանոնագրքի հատված 9, բաժիններ 7028.6 և 7149(r):

³⁶ Կալիֆորնիայի կանոնագրքի հատված 9, բաժին 7149:

փոխհատուցում DOR-ից, եթե ծառայություններն անհրաժեշտ են մասնագիտական նպատակին հասնելու համար:

2. Ի՞նչ կպատահի, եթե ես համաձայն չեմ դպրոցական օկրուզի կողմից ինձ տրամադրված Անցումային պլանի հետ

Եթե դուք և դպրոցական օկրուզը համաձայն չեք ձեր անցումային պլանում ներառվող տվյալների հետ, դուք կարող եք ներկայացնել բողոք օրենքով սահմանված կարգով և պահանջել լսումներ: Եթե դուք որոշում եք ներկայացնել օրենքով սահմանված բողոք, դուք պետք է ձեր օրինական բողոքը ներկայացնեք Վարչական լսումների գրասենյակին երկու տարվա ընթացքում, սկսած այն ամսաթվից, երբ իմացաք (կամ պատճառ ունեիք իմանալու) ձեր բողոքի փաստերի մասին: Օրենքով սահմանված բողոքների վերաբերյալ տեղեկատվության կամ աջակցության համար կարող եք կապվել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության հետ 1-800-776-5746 հեռախոսահամարով:

3. Ի՞նչ կպատահի, եթե դպրոցական օկրուզը չի տրամադրում իմ անցումային պլանում համաձայնեցված ծառայությունները

Դուք իրավունք ունեք ներկայացնել օրինական բողոք Կալիֆորնիայի Կրթության դեպարտամենտին (California Department of Education - CDE), եթե դպրոցական օկրուզը չի տրամադրում այն ծառայությունները, որոնց դուք համաձայնել եք ձեր անցումային պլանում: Եթե դուք որոշում եք ներկայացնել բողոք, դուք պետք է անեք այդ մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն ամսաթվից, երբ դպրոցական օկրուզը դադարեցրել է ծառայությունների տրամադրումը:

Օրենքով սահմանված կարգի և բողոք ներկայացնելու ընթացակարգերի մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել "Հատուկ կրթական իրավունքներ և պարտավորություններ" հրապարակման մեջ, որը հասանելի է առցանց՝

<http://www.disabilityrightsca.org/pubs/504001Ch06.pdf>

4. Ի՞նչ է պատահում, եթե DOR-ը մերժում է որևէ ծառայություն

Եթե DOR-ը մերժում է որևէ ծառայություն, դուք կարող եք փորձել լուծել այդ խնդիրը DOR-ի ձեր խորհրդատուի և նրա ղեկավարի հետ: Եթե դուք ի վիճակի չեք լուծել խնդիրը ձեր խորհրդատուի կամ ղեկավարի հետ, դուք կարող եք պահանջել, որ Շրջանային ադմինիստրատորը կատարի Վարչական վերանայում: Սակայն դուք պարտավոր չեք փորձել և լուծել ձեր խնդիրը DOR-ի ձեր խորհրդատուի և/կամ ղեկավարի հետ Վարչական վերանայում պահանջելուց առաջ: Վարչական վերանայումը պետք է պահանջել այն որոշման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում, որի հետ դուք համաձայն չեք:

Եթե դուք բավարարված չեք Վարչական վերանայմամբ, դուք կարող եք պահանջել միջնորդություն և/կամ Անկողմնակալ լուծմներ: Այս պահանջը դուք պետք է ներկայացնեք գրավոր և Վարչական վերանայման որոշումից հետո՝ 30 օրվա ընթացքում:³⁷ Դուք պարտավոր չեք պահանջել Վարչական վերանայում նախքան միջնորդության և/կամ անկողմնակալ լուծմների դիմում ներկայացնելը: Դուք կարող եք պահանջել միջնորդություն և/կամ Անկողմնակալ լուծմներ այն որոշման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում, որի հետ դուք համաձայն չեք: Այնուամենայնիվ, ձեզ համար շահավետ կլինի անկողմնակալ լուծմներ պահանջելուց առաջ ձեր մտահոգությունները քննարկել նախ DOR-ի ձեր խորհրդատուի և/կամ ղեկավարի հետ, ինչպես նաև վերևում քննարկված DOR-ի Վարչական վերանայման գործընթացի միջոցով: Շատ խնդիրներ կարող են լուծվել տեղում, ոչ պաշտոնապես և ավելի արագ:

³⁷ Կալիֆորնիայի կանոնագրքի հատված 9, բաժին 7353(f):

DOR-ի ծառայությունների մասին մանրամասն տեղեկատվության կամ աջակցության համար կարող եք զանգահարել Նպաստառուի աջակցության ծրագրին (Client Assistance Program - CAP): CAP-ն օգնում է ձեզ հասկանալ ձեր իրավունքները և պարտավորությունները՝ ներառյալ DOR-ի ծառայություններից օգտվելու ձեր իրավունքը: CAP-ի պաշտպանները կարող են ի վիճակի լինել օգնել ձեզ լուծելու խնդիրները ձեր DOR խորհրդատուի հետ կամ օգնել և ձեր անունից իրականացնել մասնագիտական ծառայությունների հետ կապված պաշտպանություն՝ կիրառելով պաշտպանության իրավական, վարչական կամ այլ համապատասխան միջոցներ ձեր իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:³⁸ CAP-ի պաշտպանի հետ կապվելու համար խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությանը 1-800-776-5746 հեռախոսահամարով:

5. Ի՞նչ կպատահի, եթե ես համաձայն չեմ ծառայության վերաբերյալ տարածքային կենտրոնի որոշման հետ

Եթե դուք ստանում եք որևէ ծառայություն և համաձայն չեք այդ ծառայությունը փոխելու կամ դադարեցնելու տարածքային կենտրոնի որոշման հետ, դուք պետք է պահանջեք անկողմնակալ լսումներ միջոցներ ձեռնարկելու ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Այլապես, ցանկացած բողոքարկում կամ լսումների պահանջ պետք է ներկայացվի ծանուցման ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում: Տարածքային կենտրոնի որոշումները բողոքարկելու կարգը տե՛ս "*Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքներ*" վերնագրով մեր հրապարակման 12-րդ գլխում, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/506301Ch12.pdf>

³⁸ Տե՛ս հիմնականում ԱՄՆ օրենսգրքի հատված 29, բաժին 732:

6. Ի՞նչ է Բաժին 4731-ով սահմանված բողոքը

Դուք կարող եք ներկայացնել Բաժին 4731-ով սահմանված բողոք, եթե տարածքային կենտրոնը խախտում է օրենքը կամ որևէ կանոնակարգ: Դա նշանակում է, որ եթե ձեր իրավունքները խախտվել կամ մերժվել են, Բաժին 4731-ով սահմանված բողոքի ներկայացումը կարող է լինել համապատասխան իրավական ընթացակարգ: Դուք կարող եք ներկայացնել Բաժին 4731-ով սահմանված բողոք, եթե տարածքային կենտրոնը չի կատարում Վարչական գործերով դատավորի (Administrative Law Judge - “ALJ”) որոշումը կամ եթե նրանք ձեզ համար չեն ապահովում ձեր IPP-ում նշված ծառայությունների ձեր կողմից ստացումը:

Բաժին 4731-ով սահմանված բողոքը նույնը չէ, ինչ անկողմնակալ լուծման բողոքը: Դուք չեք կարող ներկայացնել բողոք ձեր IPP-ում նշված ձեր կողմից ստացվող ծառայությունների քանակի կամ աջակցության տեսակների վերաբերյալ անհամաձայնությունը լուծելու համար: Բաժին 4731-ով սահմանված բողոքն օգտագործվում է միայն, եթե տարածքային կենտրոնը, զարգացման կենտրոնը կամ ծառայության մատակարարը խախտում է օրենքը կամ որևէ կանոնակարգ:

Օրինակ՝ տարածքային կենտրոնը խախտում է օրենքը, եթե. նրանք չեն տրամադրում ձեր IPP-ում նշված ծառայությունը կամ եթե նրանք չեն կատարում Վարչական գործերով դատավորի որոշումը: Դուք կարող եք ներկայացնել Բաժին 4731-ով սահմանված բողոք տարածքային կենտրոնի, զարգացման կենտրոնի կամ ծառայության մատակարարի դեմ (ինչպիսիք են խնամքի համայնքային կենտրոնները, ցերեկային ծրագրերը կամ տարածքային կենտրոնի

կողմից վարձված ցանկացած փոխադրող):³⁹ Ձեր բողոքը ներկայացնելու համար գրավոր դիմե՛ք ձեր տարածքային կենտրոնի տնօրենին: Բաժին 4731-ով սահմանված բողոք ներկայացնելու կարգի մասին տե՛ս "Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքների ձեռնարկ"-ի 12-րդ գլուխը:

7. Ի՞նչ է Նպաստառուների իրավունքների պաշտպանության գրասենյակը (Clients' Rights Advocacy - OCRA):

Եթե ունեք հարցեր կամ ձեր տարածքային կենտրոնի հետ կապված աջակցության կարիք, կարող եք զանգահարել Նպաստառուների իրավունքների պաշտպանության գրասենյակին (Clients' Rights Advocacy - OCRA): OCRA-ն կարող է օգնել հասկանալ ձեր իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ տարածքային կենտրոնի և այլ ծրագրերով տրամադրվող ծառայությունների ստացման ձեր իրավունքը: OCRA-ի պաշտպանները կարող են ի վիճակի լինել օգնել ձեզ լուծել խնդիրները՝ կիրառելով պաշտպանության իրավական, վարչական կամ այլ միջոցներ ձեր իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: OCRA-ին կապվելու համար զանգահարե՛ք 1-800-390-7032 հեռախոսահամարով:

8. Օգտակար ռեսուրսներ

Ստորև Կալիֆորնիայի Տեխնիկական աջակցության և ուսուցման ծառայությունների (California Services for Technical Assistance and Training - CalSTAT) ռեսուրսների հղումն է "Անցում." Դպրոցից դեպի չափահաս կյանք" թեմայի շուրջ:

<http://www.calstat.org/transitionmessages.html>

³⁹ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 4731(b):

Էջ 31` 31-ից

Ստորև Կալիֆորնիայի Անցումային Ալյանսի (California Transition Alliance) ռեսուրսների հղումն է "Անցում" թեմայի շուրջ:

<http://www.catransitionalliance.org/resources/>

Եթե ունեք հարցեր կարող եք կապվել Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության հետ 1-800-776-5746 հեռախոսահամարով:

Մենք ցանկանում ենք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: